«Լիմիթլես ասեթ մենեջմենթ» ՓԲԸ-ի «Լիմիթլես Փրայմ Ֆոնդ» հրապարակային, պայմանագրային, բաց, լրացուցիչ ռիսկով ներդրումային ֆոնդ

Ֆինանսական հաշվետվություններ

2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն 3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հաշվետու ընկերություն 5
2. Պատրաստման հիմունքներ 5
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ 6
4. Կարևոր հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ .....
5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 10
6. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ 10
7. Փայատերերին վերագրելի զուտ ակտիվներ 10
8. Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վաճառքից 11
9. Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործքիների իրական արժեքի փոփոխությունից 11
10. Միջնորդավճարների գծով ծախսեր 11
11. Ռիսկերի կառավարում 12
12. Գործարքներ Կառավարչի և այլ կապակցված կողմերի հետ 15
13. Ֆինանսական գործիքների իրական արժեքը 15
14. Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծություն 16
15. Կապիտալ ռիսկի կառավարում 16
16. Պայմանական պարտավորություններ 16

Ernst & Young CJSC
Vazgen Sargsyan St., 2 Building,
Yerevan, 0010 Armenia,
Kamar Business Center
Tel: +374 60 50 7777
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010,
Վազգեն Սարգսյան փող., 2 շենք
«Կամար» Բիզնես Կենտրոն
Հեռ.՝ +374 60 50 7777

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Լիմիթլես Փրայմ Ֆոնդ» փայատերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Լիմիթլես Փրայմ Ֆոնդ» (այսուհետ՝ Ֆոնդ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները 2023 թվականի հուլիսի 11-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ֆոնդի ֆինանսական վիճակը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը 2023 թվականի հուլիսի 11-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ֆոնդից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության Միջազգային Ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կիրառելի էթիկայի այն պահանջների, որոնք վերաբերում են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտին, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և տնօրենների խորհուրդը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ֆոնդի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ֆոնդի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ֆոնդը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու են Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել , որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ֆոնդի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Ֆոնդի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ֆոնդի գործունեության անընդհատության դադարեցմանը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Տնօրենների խորհուրդը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Գլխավոր տնօրեն,

Աուդիտի բաժնի գործընկեր Էրիկ Հայրապետյան

Պատասխանատու աուդիտոր Արմինե Ոսկանյան

30 ապրիլի, 2024թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար ՀՀ դրամ	Ծան.	*2023թ. դեկտեմբերի 31*
Ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4	1,402,565
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	5	1,387,928
Ընդամենը ակտիվներ		**2,790,493**
Պարտավորություններ		
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	5	592,605
Կառավարման վճարների գծով կրեդիտորական պարտք	13	124,015
Ընթացիկ հարկային պարտավորություններ		58
Այլ պարտավորություններ		1,280
Ընդամենը պարտավորությունները (բացառությամբ փայատերերին վերագրելի զուտ ակտիվների)		**717,958**
Փայատերերին վերագրելի զուտ ակտիվներ	6	**2,072,535**

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. ապրիլի 30-ին:

1-16 կից ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	Ծան.	2023թ. հուլիսի 11 - 2023թ. դեկտեմբերի 31
Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վաճառքից	7	178
Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությունից	8	405,833
Շահաբաժիններից եկամուտ		28,778
Տոկոսային եկամուտ		7,126
Զուտ վնաս արտարժութային գործառնույթուններից		(2,759)
Զուտ օգուտ արտարժույթի փոխարժեքի վերագնահատումից		23,194
Կառավարման վճարներ		(137,092)
Միջնորդավճարների գծով ծախսեր	9	(10,717)
Զուտ շահույթ նախքան հարկումը		**314,541**
Շահութահարկի գծով ծախս		(58)
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ հաշվետու ժամանակաշրջանի համար		**314,483**
Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճ		**314,483**

Տիգրան Անտինյան
«Լիմիթլես ասեթ մենեջմենթ» ՓԲԸ տնօրեն

Արմեն Ազիզյան
ՍտեփԱփ ՍՊԸ ներկայացուցիչ

Tigran Antinyan
Digitally signed by Tigran Antinyan
Date: 2024.04.30 18:38:00 +04'00'

1-16 կից ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	Փայատերերին վերագրելի զուտ ակտիվներ
Մնացորդը 2023թ. հուլիսի 11-ի դրությամբ	**–**
Փայերի թողարկում և մարում	
Փայերի թողարկում	1,758,052
Փայերով գործարքների զուտ աճ	**1,758,052**
Ժամանակահատվածի համար փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճ	**314,483**
Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,072,535**

1-16 կից ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	
Ստացված տոկոսներ	1,522
Ստացված շահաբաժիններ	25,925
Վճարված միջնորդավճարներ	(4,513)
Վճարված կառավարման վճարներ	(13,077)
Ստացված ծառայությունների դիմաց վճարումներ	(4,924)
Արժույթի փոխարկման գծով վճարումներ	(2,759)
Զուտ դրամական միջոցների հոսքեր շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից	(380,805)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված գործառնական գործունեությունում	**(378,631)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից	
Փայերի թողարկումից մուտքեր	1,758,052
Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից	**1,758,052**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**1,379,421**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	**–**
Արտարժույթի փոխարժեքային տարբերության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	23,144
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ	**1,402,565**

1-16 կից ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

(հազար ՀՀ դրամ)

1. Հաշվետու ընկերություն

ա) Հիմնական գործունեություն

«Լիմիթլես ասեթ մենեջմենթ» ՓԲԸ-ի «Լիմիթլես Փրայմ» հրապարակային, պայմանագրային, բաց, լրացուցիչ ռիսկով ներդրումային ֆոնդը («Լիմիթլես Փրայմ» ֆոնդ կամ Ֆոնդ) հրապարակային, պայմանագրային, բաց, լրացուցիչ ռիսկով ներդրումային ֆոնդ է: Ֆոնդը հիմնադրվել է ՀՀ օրենսդրությանը համաձայն: Ֆոնդը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) No. 106-A որոշմամբ 2023թ. հուլիսի 11-ին:

Ֆոնդի ներդրումային նպատակը միավոր ռիսկի դիմաց հավելյալ եկամտի ստացումն է: Ֆոնդի ակտիվները առավելապես ներդրվում են միջազգային կարգավորվող շուկաներում (որպես հիմնական շուկաներ դիտարկվում են Նյու Յորքի ֆոնդային բորսան (New York Stock Exchange) և Նասդաքը (Nasdaq Stock Exchange)) ցուցակված/շրջանառվող իրացվելի արժեթղթերում՝ բաժնետոմսերում, պարտատոմսերում, բորսայում շրջանառվող ֆոնդերում (Exchange Traded Funds, ETF) և ածանցյալ գործիքներում:

Ֆոնդի ներդրումային գործունեությունը կառավարվում է «Լիմիթլես ասեթ մենեջմենթ» ՓԲԸ-ի կողմից (Կառավարիչ), որը գրանցվել է ՀՀ ԿԲ-ում (2022թ. դեկտեմբերի 27-ին տրված լիցենզիա 0007) ՀՀ օրենսդրության համաձայն:

Ֆոնդի կառավարչի գրանցման հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Քեռու փողոց 1/3, հարկ 5:

բ) Հայաստանի գործարար միջավայրը

Ֆոնդը իր հիմնական գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, այն ենթակա է Հայաստանի տնտեսական և ֆինանսական շուկաների ազդեցությանը, որոնք հանդիսանում են զարգացող շուկաներ: Իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, որոնք այլ իրավական և հարկաբյուջետային խոչընդոտների հետ միասին նպաստում են Հայաստանում գործող կազմակերպությունների առջև ծառացած մարտահրավերներին: Բացի այդ, 2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում զինված հակամարտության բռնկումը, դրան հաջորդած Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ հրադադարի պայմանավորվածությունը և, հետագայում, Հայաստանի Հանրապետության տարածքում հակամարտության սրումը ավելի են մեծացրել բիզնես միջավայրի անորոշությունը:

Ուկրաինայի պատերազմի արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ խիստ տնտեսական պատժամիջոցներ են սահմանել Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ: Պատերազմի սկզբից ի վեր նկատվել է ռուսական ռուբլու՝ արտարժույթի նկատմամբ զգալի անկայունություն, ինչպես նաև՝ Ռուսաստանի արժեթղթերի շուկայում և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեքի զգալի անկում: Պատերազմի հետևանքով եղավ ոչ ռեզիդենտների ներհոսք և մի շարք ընկերությունների տեղափոխում (հատկապես Ռուսաստանից) Հայաստան՝ ինչը դրական նշանակալի դերակատարություն ունեցավ, ընդհանուր առմամբ, Հայաստանի տնտեսության խթանման և մասնավորապես, ներդրումների և ակտիվների կառավարման գործընթացների խթանման հարցում: Քանի որ պատերազմը դեռ շարունակվում է, հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել այն ազդեցությունը, որը կարող է ունենալ Ընկերության գործունեության վրա, քանի որ անորոշություն կա ընդհանուր տնտեսության վրա ազդեցության աստիճանի վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ֆոնդի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Պատրաստման հիմունքներ

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն՝ թողարկված Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ֆոնդը իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («ՀՀ դրամ»), որը հանդիսանում է Ֆոնդի գործառնական արժույթը և այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Այս ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով, և բոլոր արժեքները կլորացված են հազար դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

(հազար ՀՀ դրամ)

2. Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

2.3 Չափման հիմունքներ

Ֆոնդի կողմից կիրառվող չափման հիմունքները ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս սկզբնական արժեքի սկզբունք է, ինչը սովորաբար կիրառվում է չափման այլ հիմունքների հետ համատեղ: Չափման այլ հիմունքների կիրառման դեպքում Ֆոնդը բացահայտում է դրանք համապատասխան ծանոթագրություններում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Համաձայն Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1 և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2 ստանդարտների փոփոխությունների, որոնք ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից, ինչպես բացահայտված է Ծան. 3 (3.8)-ում, Ֆոնդը ընդունել է հաշվապահական հաշվառման քաղաքականությունների իր բացահայտումը: Էական հաշվապահական հաշվառման քաղաքականությունների վերաբերյալ ընդունված տեղեկատվությունը կենտրոնանում է այն փաստի վրա, թե ինչպես է Ընկերությունը կիրառել ՖՀՄՍ-ների պահանջները իր հանգամանքների նկատմամբ և ինչպես է ներառում հիմնականում այն հոդվածները, որոնց մասով Ընկերությունը ընտրել է հաշվապահական հաշվառման քաղաքականություն ՖՀՄՍ կողմից թույլատրված մեկ կամ մի քանի տարբերակներից, հոդվածներ, որոնք ենթակա են նշանակալի դատողությունների կամ գնահատումների, և բացառում է այն տեղեկատվությունը, որը միայն կրկնօրինակում կամ ամփոփում է ՖՀՄՍ-ների պահանջները, ինչպես նաև ոչ էական հարցերի վերաբերյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունները:

3.1 Իրական արժեքի չափում

Ֆոնդը չափում է ներդրումային արժեթղթերը իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Այն ակտիվները և պարտավորությունները, որոնք ճանաչվում են իրական արժեքով շարունակական հիմունքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, Ֆոնդը որոշում է, արդյոք տեղի է ունեցել տեղափոխում հիերարխիայի մակարդակների միջև, վերագնահատելով դասակարգումը (հիմք ընդունելով ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք նշանակալի են իրական արժեքի չափման համար) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

3.2 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ֆոնդի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը:

	2023թ. դեկտեմբերի 31
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	404.79

Դրամային հոդվածների հաշվարկից և փոխարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում՝ «Զուտ օգուտ արտարժույթի փոխարժեքի վերագնահատումից» հոդվածում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ (շարունակություն)

3.3 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են սկզբնական ճանաչման ժամանակ որպես հետագայում ամորտիզացված արժեքով, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆոնդի՝ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Շահույթի կամ վնասի միջոցով իրկաան արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Այն ֆինանսական ակտիվները, որոնք չեն չափվում ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով, չափվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով: Մասնավորապես՝

- Բաժնային գործիքներում ներդրումները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե միայն Ֆոնդը չի դասակարգում բաժնային գործիքներում ներդրումները, որը չի պահվում վաճառքի կամ ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում առաջացած պայմանական վարձատրության համար, որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող սկզբնական ճանաչման ժամանակ:
- Պարտքային գործիքները, որոնք չեն համապատասխանում ամորտիզացված արժեքի չափանիշին կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման չափանիշին, դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Ինչպես նաև, պարտքային գործիքները, որոնք համապատասխանում են կամ ամորտիզացված արժեքով չափման համար նախատեսված չափանիշներին, կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման համար նախատեսված չափանիշներին, կարող են դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող սկզբնական ճանաչման ժամանակ, եթե այսպիսի դասակարգումը վերացնում կամ զգալիորեն նվազեցնում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը («հաշվապահական հաշվառման անհամապատասխանություն»), ինչը կառաջանար ակտիվների կամ պարտավորությունների չափումից կամ տարբեր հիմունքներով այդ ակտիվների կամ պարտավորությունների մասով օգուտի կամ վնասի ճանաչումից:

Բաժնային արժեթղթերը, կորպորատիվ պարտքային արժեթղթերը և ֆոնդի փայերում ներդրումները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասը, որը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նրանք չեն հանդիսանում հեջային գործիքների մաս: Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ օգուտը կամ վնասը ներառում է ֆինանսական ակտիվի մասով ցանկացած շահաբաժին կամ ստացված տոկոս և ներառվում է «զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործքիների իրական արժեքի փոփոխությունից» հոդվածում:

Արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը որոշվում է այդ արտարժույթով և փոխարկվում են սփոթ փոխարժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամկանաշրջանի վերջի դրությամբ: Մասնավորապես՝

- Հեջային գործիքների մաս չհանդիսացող, ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների մասով արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասում «զուտ օգուտ արտարժույթի փոխարժեքի վերագնահատումից» հոդվածում;
- Հեջային գործիքների մաս չհանդիսացող, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների մասով արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասում «զուտ օգուտ արտարժույթի փոխարժեքի վերագնահատումից» հոդվածում;

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ (շարունակություն)

3.4 Արժեթղթերով գործարքներ և համապատասխան ներդրումային եկամուտ

Տոկոսային եկամուտը հաշվառվում է հաշվեգրման սկզբունքով: Շահաբաժինների տեսքով եկամուտը հաշվառվում է նախորդ շահաբաժնի ամսաթվին:

Շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից զուտ օգուտը ներառում է իրական արժեքի բոլոր իրացված և չիրացված փոփոխությունները, արտարժույթի փոխարժեքային տարբերությունները, նաև տոկոսների և շահաբաժինների տեսքով եկամուտը, որը ճանաչվում է, երբ հաստատվում է Ֆոնդի՝ վճարումներ ստանալու իրավունքը:

3.5 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են հանդիսանում բանկերում ընթացիկ հաշիվները:

3.6 Զուտ ակտիվներ

Թողարկված փայերի համար ստացված գումարները հաշվառվում են զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվության «փայատերերին վերագրելի զուտ ակտիվներ» հոդվածում:

Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճը ներառում է ընթացիկ տարվա շահույթը:

3.7 Շահութահարկ

Ընթացիկ տարվա շահութահարկը հաշվարկվում է Ֆոնդի զուտ ակտիվների 0.01% չափով:

3.8 Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում

ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում («Էականության մասին դատողությունների կիրառում»), փոփոխությունները ներկայացնում են ուղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ էականության դատողությունները: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումները՝ փոխարինելով «նշանակալի» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջը «էական» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն էականության հայեցակարգը հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

Այս փոփոխությունները ազդեցություն են ունեցել Ֆոնդի՝ հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտումների վրա, բացառությամբ Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների ցանկացած միավորի չափման, ճանաչման կամ ներկայացման վրա:

ՖՀՄՍ 17 Ապահովագրության պայմանագրեր – փոփոխությունները և մեկնաբանությունները առաջին անգամ կիրառվել են 2023 թվականին, սակայն Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցություն չեն ունեցել:

Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ) – փոփոխությունները Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցություն չեն ունեցել:

Միջազգային հարկային բարեփոխումներ - Մոտեցում II մոդելի կանոններ - ՀՀՄՍ 12 ստանդարտի փոփոխություններ - Ֆոնդը ենթակա չէ Մոտեցում II մոդելի կանոններով պայմանավորված հարկմանը, քանի որ այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում – Փոփոխություններ ՀՀՄՍ 8 ստանդարտում – այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների վրա:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ (շարունակություն)

3.9 Դեռևս չընդունված նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Ստորև նկարագրված են հրապարակված նոր և փոփոխված ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների թողարկման ժամանակ դեռևս ուժի մեջ չեն եղել: Ֆոնդը պատրաստվում է կիրառելիության դեպքում ընդունել այս նոր և փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները, երբ դրանք ուժի մեջ մտնեն: Ակնկալվում է, որ այս փոփոխությունները Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն չեն ունենա:

- ՖՀՄՍ 16 ստանդարտի փոփոխություններ. Վարձակալության գծով պարտավորություն Վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքներում
- Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ
- Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածություններ – փոփոխություններ ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 ստանդարտներում

4. Կարևոր հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ֆոնդի ղեկավարությունը կարևոր դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են ունենում ֆինանսական հաշվետվություններում արտացոլված եկամուտների և ծախսերի գումարների վրա, ակտիվների և պարտավորությունների վրա, ինչպես նաև կից բացահայտումների և պայմանական պարտավորությունների բացահայտման վրա: Այս ենթադրությունների ու գնահատումների վերաբերյալ անորոշությունը կարող է հանգեցնել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների՝ հաջորդող ֆինանսական տարում էական ճշգրումների առաջացման զգալի ռիսկ:

Դատողություններ

Ֆոնդի հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ընթացքում ղեկավարությունը կատարել է դատողություններ, որոնք առավել նշանակալի ազդեցություն են ունեցել ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա:

Գնահատումներ և ենթադրություններ

Ապագային և այլ առանցքային աղբյուրների գնահատման
անորոշությանն առնչվող ենթադրությունները հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, որոնք պարունակում են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի ճշգրտման նշանակալի ռիսկ, հաջորդ ֆինանսական տարում, ներկայացված են ստորև: Ֆոնդն իր ենթադրությունները և գնահատումները կառուցել է՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ հասանելի չափանիշների վրա: Ներկա հանգամանքները և ենթադրությունները ապագա զարգացումների վերաբերյալ, այնուամենայնիվ կարող են փոխվել շուկայական փոփոխությունների հետ կապված կամ Ֆոնդի վերահսկողությունից դուրս գտնվող հանգամանքներից ելնելով: Այսպիսի փոփոխությունները, երբ տեղի են ունենում, արտացոլվում են ենթադրություններում:

Իրական արժեքի չափում

Դատողությունները, որոնք էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում և գնահատումներում ճանաչված գումարների վրա, որոնք կարող են առաջացնել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի էական ճշգրտում հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում, վերաբերում են ֆինանսական գործիքների հաշվառմանը, մասնավորապես՝ իրական արժեքի չափմանը: Իրական արժեքի լավագույն հիմնավորումը գների գնանշումն է ակտիվ շուկայում: Ակտիվ շուկայում գնանշված գների բացակայության դեպքում Ղեկավարությունն օգտագործում է գնահատման այլ մեթոդներ, օրինակ՝ համեմատական մոտեցումը նմանատիպ գործիքների հետ ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան շուկաներում, ինչպես նաև վաճառքի գործարքների փաստացի գները, որոնք տեղի են ունեցել հաշվետու ամսաթվին մոտ ժամանակահատվածում: Տե՛ս 5, 8 ծանոթագրությունները:

(հազար ՀՀ դրամ)

5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	2023թ. դեկտեմբերի 31
Ընթացիկ հաշիվներ բանկերից բացի այլ ֆինանսական հաստատություններում	1,392,589
Ընթացիկ հաշիվներ բանկերում	9,976
Ընդամենը	**1,402,565**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ֆոնդը ունի մեկ ֆինանսական հաստատություն, որի մնացորդը գերազանցում է զուտ ակտիվների արժեքի 10%-ը:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների համախառն արժեքը կազմում է 1,392,589 հազար ՀՀ դրամ:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՊԿ չափման նպատակով բոլոր դրամական միջոցների համարժեքները տեղաբաշխված են փուլ 1-ում:

6. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական ակտիվներ Հազար ՀՀ դրամ	2023թ. դեկտեմբերի 31
Արժեթղթեր	533,293
Օպցիոններ	854,635
Ընդամենը	**1,387,928**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, մեկ սովորական բաժնետոմս և մեկ օպցիոն, որոնց գումարը գերազանցում է զուտ ակտիվների 10%-ը:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, այդ մնացորդների համախառն մնացորդը կազմում է 821,820 հազար ՀՀ դրամ:

Ֆինանսական պարտավորություններ Հազար ՀՀ դրամ	2023թ. դեկտեմբերի 31
Օպցիոններ	592,605
Ընդամենը	**592,605**

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներառում են Ֆոնդի բնականոն գործունեության ընթացքում առևտրային նպատակով պահվող արժեթղթերը և ածանցյալ գործիքները:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Ֆոնդը ունի մեկ օպցիոն, որի գումարը գերազանցում է զուտ ակտիվների 10%-ը: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, այդ մնացորդների համախառն մնացորդը կազմում է 355,152 հազար ՀՀ դրամ:

7. Փայատերերին վերագրելի զուտ ակտիվներ

Փայերի քանակի և փայատերերին վերագրելի զուտ ակտիվների շարժի վերլուծությունը հետևյալն է՝

	Փայերի քանակ	
Մնացորդը 2023թ. հուլիսի 11-ի դրությամբ	–	–
Ժամանակահատվածում թողարկված փայեր	4,379	1,758,052
Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճ	–	314,483
Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,379**	**2,072,535**
Զուտ ակտիվների արժեքը մեկ փայի համար (ՀՀ դրամով)		**473,339**

(հազար ՀՀ դրամ)

7. Փայատերերին վերագրելի զուտ ակտիվներ (շարունակություն)

Փայերի գնում, մարում և բաշխում

Ֆոնդի փայերը առաջարկվում են մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների արժեքով՝ հաշվարկված յուրաքանչյուր աշխատանքային օր: Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը որոշվում է Ֆոնդի ակտիվների շուկայական արժեքի հիման վրա՝ դրանից նվազեցնելով Ֆոնդի պարտավորությունները (պահանջներ Ֆոնդի նկատմամբ):

Փայատերերին վերագրելի զուտ ակտիվները հաշվառվում են այն գումարով, որը վճարման ենթակա կլիներ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ, եթե փայատերերը որոշեին օգտվել փայերի մարման իրավունքից:

Ֆոնդի փայի հաշվարկային արժեքը, որը ներկայացնում է Ֆոնդի ընդհանուր ակտիվների և պարտավորությունների տարբերությունը հարաբերած չմարված փայերի քանակով, հաշվարկվում և հրապարակվում է օրական կտրվածքով:

Ինչ վերաբերում է 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փայատերերին վերագրելի զուտ ակտիվներին, փայատերերն իրավունք ունեն ցանկացած աշխատանքային օր պահանջելու փայերի մարումը: Մարման վճարները կազմում են 10% և գանձվում են մարման գումարից, եթե փայերը պահվել են 12 ամսից պակաս ժամկետով՝ ներդրման ամսաթվից սկսած:

8. Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վաճառքից

Հազար ՀՀ դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Զուտ օգուտ արժեթղթերի վաճառքից	178
Ընդամենը	**178**

9. Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործքիների իրական արժեքի փոփոխությունից

Հազար ՀՀ դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Զուտ օգուտ արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունից	208,160
Զուտ վնաս ածանցյալ գործքիների իրական արժեքի փոփոխությունից	197,673
Ընդամենը	**405,833**

10. Միջնորդավճարների գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Պահառուական վճարներ	6,247
Գործակալական վճարներ	2,795
Բրոքերային վճարներ	1,269
Այլ	406
Ընդամենը	**10,717**

Բանկի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ծառայությունների համար վճարները կազմել են 5,000 հազար ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: 2023 թվականի ընթացքում Բանկի արտաքին աուդիտորի կողմից ոչ աուդիտորական ծառայություններ չեն մատուցվել:

(հազար ՀՀ դրամ)

11. Ռիսկերի կառավարում

Ընդհանուր նկարագրություն

Ռիսկերի կառավարումը կարևորագույն դեր է խաղում Ֆոնդի գործունեության համար և հանդիսանում է որոշիչ բաղադրիչ Ֆոնդի գործառնական գործունեության համար: Ֆոնդի գործունեությանը բնորոշ են մի շարք ռիսկեր, ինչպիսիք են՝ շուկայական, պարտքային, իրացվելիության ռիսկերը, ինչպես նաև՝ գործառնական, իրավաբանական և հեղինակային ռիսկերը:

ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ֆոնդը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև անընդհատ հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների փոփոխությունները, առաջարկվող արտադրանքն ու ծառայությունների և ընդունված լավագույն փորձն արտացոլելու նպատակով:

Բաժնետերերը պատասխանատու են ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքի, առանցքային ռիսկերի կառավարման գործընթացի հսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման և խոշոր գործարքների հաստատման համար: Ֆոնդի ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումների հսկողության և իրականացման ու ռիսկերի համար սահմանված սահմանաչափերում Ֆոնդի գործունեության իրականացումն ապահովելու համար:

Գործադիր տնօրենը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման և սահմանված պահանջների հետ համապատասխանության ապահովման, ինչպես նաև ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառման համար: Նա հաշվետու է ուղղակիորեն բաժնետերերին:

Ռիսկի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Ֆոնդի ներսում: Ֆոնդը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկերի մեղմացմանն ուղղված ընթացիկ միջոցառումների նպատակահարմարության որոշմանը:

բ) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Ֆոնդի նկատմամբ: Ընկերությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկերը կառավարելու նպատակով (և՛ ճանաչված ֆինանսական ակտիվների, և՛ չճանաչված պայմանագրային պարտավորությունների համար):

Վարկղային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը սովորաբար արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Հավանական պարտքային ռիսկերի նվազեցման նպատակով ակտիվների և պարտավորությունների հնարավոր զուտանցման ազդեցությունը նշանակալի չի:

Վարկային որակ ըստ ֆինանսական ակտիվների դասի

Ֆինանսական ակտիվների վարկային որակը կառավարվում է Ֆոնդի կողմից՝ հիմք ընդունելով արտաքին վարկանշային համակարգերը: Չվարկավշված ռիսկերը դասակարգվում են «Ստանդարտ դաս»-ում, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք արժեզրկված են:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող բոլոր ֆինանսական ակտիվները, բացառությամբ այլ ֆինանսական ակտիվների, դասակարգվել են «Բարձր դաս»-ում:

Ստորև աղյուսակը ներակայացնում է Ֆոնդի կոնտրագենտների գնահատման համակարգի և արտաքին վարկանշման մանրամասները 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

(հազար ՀՀ դրամ)

11. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

բ) Վարկային ռիսկ (շարունակություն)

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

Moody's միջազգային վարկանիշային գործակալության վարկանիշ	***Ներքին վարկանշման նկարագրություն***	***ԴՀ***
Aaa-ից A3	Բարձր դաս	0-0.06%
Baa1-ից B3	Ստանդարտ	0.1-4.52%
Caa1-ից C	Ստանդարտից ցածր դաս	6.93-33.62.0%
D և ավելի ցածր վարկանիշ	Արժեզրկված	100%

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական ակտիվների վարկային ռիսկին ենթարկվածությունը ներկայացված է ստորև.

	2023թ. Դեկտեմբերի 31	**Երկիր**	**Վարկանիշ 2023թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,402,565	Հայաստան	Aa2-ից Ba3
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	1,387,928	ԱՄՆ	Aa2
	2,790,493		

գ) Իրացվելության ռիսկ և համապատասխան կառավարում

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ֆոնդը դժվարություն կունենա իր այն ֆինանսական պարտավորությունները կատարելիս, որոնց մարումը նախատեսվում է կատարել կանխիկ դրամով կամ այլ ֆինանսական ակտիվներով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման հիմնարար գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը:

Ֆոնդը ձգտում է պահպանել իրացվելության կառավարումը՝ դրամական միջոցների հոսքերի պահանջներն արագ և արդյունավետ բավարարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և այդ դրամական հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքի հաշվին ֆինանսավորման ներգրավման ծրագրերի մշակում
- բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական հոսքերի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման անընդհատությունն ապահովող ծրագրերի մշակում,

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ֆոնդի՝ 717,900 հազար ՀՀ դրամի ֆինանսական պարտավորությունները ենթակա են վճարման ըստ պահանջ կամ մեկ ամսվա ընթացքում:

(հազար ՀՀ դրամ)

11. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը համակարգի խափանման, աշխատակազմի կողմից տույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով հնարավոր կորուստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, ունենալ իրավական հետևանքներ կամ հանգեցնել ֆինանսական վնասների: Ֆոնդը չի ակնկալում, որ կարող է վերացնել բոլոր գործառնական ռիսկերը, սակայն ներքին վերահսկողության համակարգի օգնությամբ և հնարավոր ռիսկերի որոշման և համապատասխան արձագանքի միջոցով Ֆոնդը կարող է կառավարել նման ռիսկերը: Ներքին վերահսկողության համակարգը նախատեսում է պարտավորությունների արդյունավետ տարանջատում, մուտքի թույլտվության, համադրման և հաստատման գործընթացներ, աշխատակազմի վերապատրաստում և գնահատում, այդ թվում՝ ներքին աուդիտի օգտագործում:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայում գործող գների փոփոխությունները, ինչպիսիք են տոկոսադրույքի, արժեթղթերի արժեքի, արտարժույթի փոխարժեքի և վարկային սպրեդերի փոփոխությունները, կազդեն Ֆոնդի եկամուտների կամ ֆինանսական գործիքների իրական արժեքի վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով եկամտաբերության օպտիմալացումը:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն առաջանում է այն ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով, որոնք Ֆոնդը գործառնական արժույթով չեն պահվում: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

	2023թ. դեկտեմբերի 31		
	ՀՀ դրամ	**ԱՄՆ դոլար**	**Ընդամենը**
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,856	1,396,709	1,402,565
Ներդրումներով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող	–	1,387,928	1,387,928
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**5,856**	**2,784,637**	**2,790,493**
Ֆինանսական պարտավորություններ			
Պարտավորություններ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող	–	592,605	**592,605**
Կառավարման վճարների գծով կրեդիտորական պարտք	124,015	–	**124,015**
Այլ պարտավորություններ	1,280	–	1,280
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**125,294**	**592,605**	**717,900**
Զուտ դիրք	**(119,497)**	**2,192,032**	**2,072,535**

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկն այն ռիսկն է, երբ ակտիվի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն արտարժույթի փոխարժեքի փոփոխության արդյունքում:

Ստորև աղյուսակը ներկայացնում է այն արժույթները, որոնցով Ֆոնդը ունի 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախառն մնացորդ դրամային ակտիվների և պարտավորությունների գծով: Այս վերլուծությունը հաշվարկում է ՀՀ դրամի նկատմամբ արտարժույթի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր շարժի ազդեցությունը, շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում այլ փոփոխականների հաստատուն մնալու դեպքում: Բացասական գումարն արտացոլում է հավանական զուտ նվազումը շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում, իսկ դրական գումարը՝ հավանական զուտ աճը:

(հազար ՀՀ դրամ)

11. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Արտարժույթի ռիսկ (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	***Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն % 2023թ.***	***Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա 2023թ.***
Արժույթ		
	10%	219,203
ԱՄՆ դոլար	-10%	(219,203)

12. Գործարքներ Կառավարչի և այլ կապակցված կողմերի հետ

Կառավարման վճարները բաղկացած են երկու մասից՝

ա) հաստատուն վճար՝ Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի տարեկան 2 (երկու) տոկոսի չափով (նախքան կառավարման վճարի նվազեցումը)

բ) Հավելավճար՝ 2.5 տոկոս եռամսյակային եկամուտը գերազանցող գումարի 40 (քառասուն) տոկոսի չափով (ներառյալ բոլոր ծախսերը, բացառությամբ երկու տոկոս հաստատուն կառավարման վճարի), որը հաշվարկվում է եռամսյակային կտրվածքով:

Մեկ տարվա ընթացքում գանձվող կառավարման վճարը կազմել է 124,015 ՀՀ դրամ:

13. Ֆինանսական գործիքների իրական արժեքը

Ֆոնդը տրամադրում է իր ակտիվների և պարտավորությունների վերլուծություն, որոնք սկզբնական ճանաչումից հետո չափվում են իրական արժքով, խմբավորվում են մակարդակներ 1-ից 3-ում, հիմք ընդունելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանը: Մակարդակները ներկայացվում են ստորև՝

- Մակարդակ 1 – նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկայում գնանշվող գները (չճշգրտված);
- Մակարդակ 2 - մակարդակ 1-ում նշված գներից տարբերվող ելակետային տվյալները, որոնք ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող) դիտարկելի են ակտիվների կամ պարտավորությունների գծով , և
- Մակարդակ 3 – ակտիվի կամ պարտավորության գծով եկալետային տվայլներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

ա) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները, ժամկետային ավանդները, հետգնման պայմանագրերը և այլ կրեդիտորական պարտքերը իրացվելի են կամ ունեն կարճ մարման ժամկետ (մինչև երեք ամիս), հետևաբար, ենթադրվում է, որ հաշվեկշռային արժեքները մոտ են դրանց իրական արժեքներին:

բ) Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար ՀՀ դրամ	***Մակարդակ 1***	***Մակարդակ 2***	***Մակարդակ 3***	***Ընդամենը իրական արժեք***
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	1,387,928	-	–	1,387,928

Կորպորատիվ արժեթղթերը դասակարգվել են մակարդակ 1-ում, քանի որ դրանք գնահատվել են օգտագործելով ակտիվ շուկայում գնանշվող գները:

(հազար ՀՀ դրամ)

14. Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծություն

Ստորև աղյուսակը ներկայացնում է ակտիվների և պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ այն դեպքերի, երբ ակնկալվում է, որ դրանք կվերականգնվեն կամ կմարվեն: Տե՛ս ծան. 11 *Ռիսկերի կառավարում* Ֆոնդի պայմանագրային չզեղչված մարման պարտավորությունների մասով:

	2023թ.		
	Մեկ տարվա ընթացքում	***Ավելի քան 1 տարի***	***Ընդամենը***
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,402,565	–	1,402,565
Ներդրումներ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող	1,387,928	–	1,387,928
	2,790,493	**–**	**2,790,493**
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող պարտավորություններ	592,605	–	592,605
Կառավարման վճարների գծով կրեդիտորական պարտք	124,015	–	124,015
Շահութահարկի գծով պարտավորություններ	58	–	58
Այլ պարտավորություններ	1,280	–	1,280
	717,958	**–**	**717,958**

Ֆոնդի ղեկավարությունը դիտարկում է շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները որպես իրացվելի, ինչը Ֆոնդը կարող է փոխարկել դրամական միջոցների, հետևաբար Ֆոնդը այս ակտիվները ներակայացրել է՛մեկ տարվա ընթացքում հոդվածում:

15. Կապիտալ ռիսկի կառավարում

Ֆոնդի կապիտալը ներկայացված է փայատերերին վերագրելի զուտ ակտիվներով: Ֆոնդը փորձում է ներդրումների բաժանորդագրումները ներդնել այնպես, որ ապահովի Ֆոնդի ներդրումային նպատակների իրականացումը՝ միևնույն ժամանակ պահպանելով բավարար իրացվելիությունը փայատերերի մարումներն ապահովելու համար:

16. Պայմանական պարտավորություններ

ա) Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափերը հիմնականում դեռևս հասանելի չեն: Ֆոնդը չունի իր գործունեության դադարեցման, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորության ամբողջական ապահովագրություն: Քանի դեռ Ֆոնդը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ նշանակալի բացասական ազդեցություն Ֆոնդի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

բ) Դատական վարույթներ

Ֆոնդը ներգրավված չի դատական վարույթներում, որոնք կարող են նշանակալի ազդեցություն ունենալ Ֆոնդի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

գ) Հարկում

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

(հազար ՀՀ դրամ)

16. Պայմանական պարտավորություններ (շարունակություն)

գ) Հարկում (շաևունակություն)

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները: